



Զարինե Արամի Ազիզյանը ծնվել է 1989 թվականի դեկտեմբերի 23-ին քաղաք Արմավիրում:

Զարինե Ազիզյանը միացել է ԱԿԲԱ Բանկին 2012 թվականին՝ որպես Իրավախորհրդատու: 2016 թվականից 2022 թվականը նա հանդիսացել է Բանկի Բիզնես գործընթացների իրավական սպասարկման բաժնի պետ, իսկ 2022 թվականից մինչև 2025 թվականը Զարինե Ազիզյանը ղեկավարել է Բանկի Իրավաբանական վարչությունը՝ վերահսկելով Բանկի բոլոր իրավական հարցերը: Միաժամանակ, Զարինե Ազիզյանը դասավանդում է ՀՀ Արդարադատության ակադեմիայում:

Նա ունի իրավագիտության բակալավրի աստիճան և Միջազգային բիզնես իրավունքի մագիստրոսի աստիճան Ժան Մուլենի Լիոն 3 Համալսարանից և Հայաստանում Ֆրանսիական համալսարանից:

2018 թվականին Զարինե Ազիզյանը «Civil Law Initiative» ծրագրի շրջանակներում ստացել է Մայրցամաքային իրավունքի ուսուցման սերտիֆիկատ Ֆրանսիայի Փարիզ II Պանթեոն-Ասաս համալսարանից:

2024 թվականին Զարինե Ազիզյանը ստացել է Ռազմավարական կառավարման և առաջնորդության 7-րդ մակարդակի դիպլոմ Մեծ Բրիտանիայի Արտոնագրված Կառավարման ինստիտուտի կողմից(CMI):

2025 թվականին Զարինե Ազիզյանը ստացել է Համապատասխանության սերտիֆիկատ Միջազգային համապատասխանության ասոցիացիայի (Միացյալ Թագավորություն) կողմից:

Հանդիսանում է Արտոնագրված Կառավարման ինստիտուտի (CMI) և Միջազգային համապատասխանության ասոցիացիայի (ICA) անդամ:

Զարինե Ազիզյանը 4 գիտական հոդվածների հեղինակ է իրավագիտության ոլորտում:

2025 թվականի մարտից Զարինե Ազիզյանը ստանձնել է ԱԿԲԱ բանկի Իրավաբանական և համապատասխանության տնօրենի պաշտոնը:

Ամուսնացած է, ունի 2 դուստր: